ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՀՈՎՍԵՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Կոստանդնուպոլսում մահկանացուն կնքեց Մայր Աթոռի միաբան Տ. Հովսեփ եպիսկոպոս Կարապետյանը։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Տ. Հովսեփ եպիսկոպոսի անակնկալ մահով կորցնում է իր արժանավոր սպասավորներից մեկին։

Հանգուցյալ սրբազանը սիրված ու ճանաչված անձնավորություն էր մեր հոգևորականության շարքերում, իր հեզահամբույր բնավորությամբ, նուանդուն գործունեությամբ, լռիկ ու համեստ աշխատանքով։

Տ. Հովսեփ եպիսկոպոսը մանուկ հասակից ձգտում է ունեցել հոգևորական դառնալու։ Նրա հոգու պայծառ իղձն է եղել ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին, և նա հոժարակամ նվիրվել է Եկեղեցու սպասավորության սուրբ գործին։ Հանգուցյալը մինչև իր կյանքի վերջին շունչը հավատարիմ է մնացել իր հոգևորականի կոչմանը, սիրով ու անտրտունջ կրելով Քրիստոսի քաղցր լուծը իր ուսերին, և անձանձրույթ ծառայել է ամեն տեղ։

Հանգուցյալը եղել է բանին կենաց ճշմարիտ քարոզիչ։ Նրա ազգաշունչ ու հոգեշունչ քարոզները դաստիարակչական մեծ դեր են կատարել իր հոտի հայրենասիրական ու եկեղեցական զգացմունքները վառ ու պայծառ պահելու հարցում։

Հանգուցյալ սրբազանը երկար ժամանակ զբաղվել է նաև ուսուցչությամբ Կոստանդնուպոլսում։ Հայ Սիրյուրի զանազան թեմերում նա պաշտոնավարել է շուրջ 30 տարի, ծառայասեր ոգով և օգտակար արդյունքներով։ Նրա բովանդակ ծառայության կետ նպատակին է եղել օգտակար լինել իր ժողովրդին, իր Հայրենիքին։

Նրա առաջնորդական ու վարչական ծառայությունները և պաշտոնավարությունը հաճախ անցել են դժնդակ ու բարդ պայմաններում, բայց նա հաղթահարել է իր ճանապարհի վրա ընկած բոլոր դժվարություններին համբերությամբ, սիրով, կորովի, օգտակար, անշահախնդիր։

Հանգուցյալը վաղուց էր, որ տառապում էր անբուժելի հիվանդությամբ։ Տքնաջան աշխատանքն ու հովվական թափառիկ կյանքը շատ շուտ քայքայել էին նրա առողջությունը, և նա հիվանդության ճիրաններում փակեց իր աչքերը, երբ Եկեղեցին ու ազգը կարիքն ունեին դեռևս նրա օգտակար ծառայություններին։

Հանդի՜ստ նրա ցավատանջ ոսկորներին։

***

Վեհափառի հրամանով Մայր Տաճարում և բոլոր թեմերում մատուցվեց հոգեհանգստյան հատուկ պատարագ, ի հիշատակ նորոգ հանգուցյալ Տ. Հովսեփ եպիսկոպոսի։